

19059

891.99

4-17

1897

ՀՈՂԱԾԻՆ

Ե Ի

ԱՆՄԵՌ ԱՂԽԱՐԳ

891.99
Գ-17

9502

2003

2003

891-99 / ԲԵՐԵԼԵՆՆՑ Ս.

Բ-17


Կ.

ՀՈՂԱԾԻՆ

Ե Ի

ԱՆՄԵՌ ԱԶԽԱՐԲ

91906
1001



Камалянцъ С. Смертный и безсмертный міръ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մարտիրոսեանց Յովհաննէսի տպարան
1897

ՀՈՂԱԾԻՆ ԵՒ ԱՆՄԵՌ ԸՅԹԱՐՔ



Էլար մի թագաւոր. ու-
 նէր մի հատիկ տղայ. այնքան
 էր սիրում, այնքան էր պաշ-
 տում տղին, որ չէր իմանում
 ինչ անի, որ աշխարքի փոր-
 ձանքներից ազատ պահելով
 կարենայ չափահաս դարձնի ու նրան պսակելով
 ուրախանայ: Սրա, նրա խորհրդին լսելով՝ որդուն
 տեղաւորեց առանձին տան մէջ. պահում էր
 այնտեղ փակը վրէն, որ ամեն մարդ չկարենայ
 մօտը գնալ ու անվայել մտքեր սովորցնել:

Թագաւորազն ապրեց քաշուած, առանձին.
 մի ծեր գիտնական գալիս էր տղի մօտ, ուսում
 տալիս ու լուռ գնում: Ինչ ասում, խրատում
 էր դաստիարակը, լսում հաւատում էր տղէն:
 Նրա սովորած բաները բոլորը հոգուն էին վե-
 րաբերում: Աերջին օրերը նրա գլուխը մի հարց
 էր մտել ու խիստ շփոթում էր. նա չըզիտէր

ինչ է լինելու իւր վերջը: Գաստիարակը յուզիչ հարցերին պատասխան չէր տալիս. բաւականանում էր՝ ասելով.— կրմեծանաս, ինքդ կ'իմանաս:

Այսպէս հեռու մնալով գայթակղութիւններից ու հրապուրող օրինակներից, թագաւորացը սնուեց, մեծացաւ բոլորովին անմեղ, միամիտ: Նա մեծ մասով մտածում էր հրեշտակների վրէժն, բայց չէր գիտում, ո՞ւր են ապրում:

* * *

Քսան տարին լրացաւ, թագաւորը մտադրուեց որդուն պսակել, որ գահը ժառանգ ունենայ: Ճաշ ուղարկեց որդու օթեւանը, իւր սուկէգօծ թուրն էլ հրամայեց դնել սեղանի վրէժն, որ այդ օրը որդու մէջքը կապի:

Խոհարարի անզգուշութիւնից կերակրի բաժնի մէջ սուկոր էր մնացել: Ճաշն աւարտելով տղէն սենեակում սկսաւ սուկորով խաղ անել, դէս դէն շարտել: Լուսամուտը վերեւից էր. սուկորը դիպաւ ապակուն, աչքը փշրեց: Փայլուն արեւի լոյսը առաստաղից ընկաւ օթեւանի պատին ու սկսաւ շողշողալ: Միամիտ տղէն շնչաւոր արարած կարծելով ուզեց արտաքսել, որ իրան մեղքի մէջ չգցի: Սեղանի վրից վերցրաւ թուրը, սկսաւ գարկել: Նա քանի հարուածում էր, շող-

քը անվնաս էր մնում և փախչելու տեղ կամաց անցնում էր պատի վերի կողմը: Անընդհատ գարկերից պատը տաշտըշուեց, սրուածքի ծեփը պոկուեց, թանկագին թուրն էլ անպէտքացաւ. թագաւորագին իւր ներկայութիւնով անհանդիստ անող փայլուն շողքը չփախաւ, չմեռաւ, այլ բարձրանալով փեղկին մօտեցաւ:

Թագաւորն այն ժամանակ ներս մտաւ, երբ որդին շողքը ձեծելուց բոլորովին յոգնել, ընկել էր գետին: Գրկելով, խօսելով ուշքի բերաւ ու քաղցր բաներով սիրտն առնելուց ետ պատճառը հարցրաւ:

Որդու շփոթուած զրուցից հայրն խսկոյն դուշակեց, թէ ինչք տեղ է ընդունել շողքը, յարմար գտնելով ըոպէն իւր գալստեան պատճառն այսպէ՞ս ասաւ.

— Սերելի որդի, այսօր արդէն չափահաս ես դառնում, աշխարք մտնելուդ ժամանակը հասել է. ես, տեսնում ես, ծերացել եմ. գահիս միակ ժառանգը դու ես: Յայտնում եմ, որ այս ընդմիջեցից ազատ կամքիդ տէրն ես, շուտով խնամխօսներ կրգնան ամեն կողմ, տեղեկութիւններ կրժողովեն, որ աշխարքիս զեղեցիկ աղջիկներից մինին հարսնացու ընտրես:

Որդին մնաց հօր երեսին նայելիս. լսածի միտքը չէր ըմբռնում, այդ պատճառով հարցրաւ.

— Ի՞նչ ես ասում, հայր իմ, ինչո՞ւ պտի հարսնացու ընտրեմ:

— Ինչպէս թէ ինչո՞ւ. հապա չե՞ս տեսնում, որ ծերացել մահի դուռն եմ հասել, դու պտի հարսնացուի հետ ամուսնանաս, գաւակներ ունենաս, որ քեզանից ետը թագաւորական գահը թափուր չըմնայ:

Որդին ապուշ-ապուշ նայելով հօրը՝ ասաւ.

— Այդ ինչ նոր բան եմ լսում, հայր: Մի՞թէ ես, դու և իմ դաստիարակը մեռնելու ենք, այսինքն անշարժ հող դառնալու. եթէ այդպէս է, էլ ինչո՞ւ ենք ծնուել:

— Ձատ ես միամիտ, որդի. ասաւ թագաւորը տխրաձայն: Մի՞թէ դաստիարակը չի ասել, որ ինչքան երկար ապրենք երկրիս վրայ, էլի վերջը մեռնելու ենք: Տէր թէ ծառայ—միւսնոյն է մահուան համար. թագաւորն էլ իբրև մարդ, չի կարող աշխարքի օրէնքից դուրս գալ:

— Հայր իմ, սկսաւ մտածել ու ճակատը շփել որդին, դու ասիր որ ինձ համար հարսնացու պտի ընտրեմ գեղեցիկ աղջիկներից, ուրեմն նա էլ պտի մեռնի:

— Ի հարկէ, որդի, իբրև հողածին նրանից էլ մահը անխուսափելի է: Մի՞թէ այդ հասարակ բաներին ինչքի չի հասնում:

— Ձատ էլ հասնում է, հայր իմ, խօսեց

թագաւորազը տխուր դէմքով. բայց ես ոչ ծերանալու յօժարութիւն ունիմ և ոչ մեռնելու. սրա դէմ ինչ կ'ասես:

— Ես ոչինչ չունեմ ասելիք, բայց ինչպէս կարելի է, որդի, այդ հօ քեզանից չի կախուած. ծնուած արարածը կըմեռնի, մշտական չի մնալ:

*
* *

Որդին քննողաբար նայեց հօր աչքերին ու կամաց ձայնով ասաւ.

— Այսօր լուսամուտից մի սիրուն բան ընկաւ պատին, թրով ինչքան զարկեցի, ո՞չ փախաւ, ո՞չ մեռաւ. բայց ման գալ զիտէր. դրա պատճառն ինչ է:

Թագաւորը մեղմ ու հանդարտ պատասխանեց.

— Զուր էիր վշտացնում նրան, կամ ինքի չարչարում: Նա այնպէս արարած է, որ քու հարուածներից ո՞չ կըվիրաւորուի, ո՞չ կըմեռնի:

— Ի՞նչպէս թէ չի մեռնիլ. նա ծնուած չի. ինձ պէս ծնողներ չունի:

Թագաւորը շարունակեց.

— Ինչպէս չէ. նա էլ ծնողներ ունի, բայց նրա ծնողները մեր աշխարքից չեն:

Որդին զարմանքից ունքերը վեր քաշեց ու պլըզած աչքերով խօսեց.

— Ի՞նչպէս թէ մեր աշխարքից չեն. ուրեմն բացի մերը ուրիշ էլ աշխարք կ'այ: Այդ ո՞րտեղ է, ի՞նչ տեսակ աշխարք է:

— Ի հարկէ կայ, որդի, այ, պատմեմ. լսիր: Մեր աշխարքը որ կայ, մեռնող, հող դառնող առարկաների աշխարք է. կոչուում է հողեղէն. նրա վրայ ամեն բան փոփոխական է, ամենը ծնուում ու մեռնում են. իսկ շողքի մօր աշխարքը սրբազան աշխարք է, սպասաւորները հրեշտակներ են. այնտեղ ամեն ինչ անփոփոխ է, անվերջ է ինչպէս Աստուած. դրա համար կոչուում է անմեռ աշխարք:

— Հայր իմ, վստահութիւն առնելով ասաւ որդիս, հապա դու ի՞նչ թագաւոր ես, որ աշխարքի ու անհուն զանձերի տէր լինելով չես կարացել մի անգամ այն աշխարքը գնալ ու դալ:

— Հողածնի համար շատ դժուար է այն աշխարքը գնալ, որդի:

Թագաւորազը չհամաձայնեց հօր կարծիքին, հակառակելով ասաւ.

— Ել թագաւորի առաւելութիւնը ո՞րն է, որ հասարակ ժողովրդի պէս պտի մեռնի ու հող դառնայ:

— Ի՞նչ արած, որդի, անմեռ աշխարք գնալ ուզողը փոքրուց պտի ամեն երկրային բանից հեռու լինի, ոչ ծնողաց կարօտ զգայ և ոչ ամուս-

նանայ. դանձն ու հարստութիւնը նրա համար գոյութիւն չպտի ունենան: Հրեշտակի պէս անշահատէր ու յաւիտենական է լինելու. բայց մարդս իբրև հողեղէն չի կարող հրեշտակի պէս սուրբ կեանք ունենալ:

— Ինչո՞ւ չի կարող, եթէ ուզենայ, վրայ բերաւ որդին:

— Գժուար է. դրա համար անհուն համբերութիւն է պէտք: Ոչ մի երիտասարդ, եթէ խելագուրկ չէ, չի համաձայնիլ թողնել մեր այս սիրուն, գրաւիչ աշխարքը ու գնալ հազար ոսրերով ու ծովերով հեռու, անծանօթ աշխարք:

— Ինչո՞ւ չի համաձայնիլ. հէնց մինը ես ուզում եմ գնալ այդ աշխարքը: Ի՞նչ ունես հակառակ: Թէ անծանօթն ես ասում, ես մեր աշխարքին էլ եմ անծանօթ. չգիտեմ ո՞րն է երկրային վայելչութիւնը:

— Սրտեղելու կարիք չկայ, որդի. եթէ մինչև օրս չես տեսել, այսուհետև կրտսնես բոլոր վայելքները հողեղէն աշխարքի: Այսօր ես չափահաս դառել:

— Ո՛չ, հայր, խօսեց թագաւորազը գլուխը շարժելով, անմեռ աշխարքի անունը լսելուց ետը չեմ ցանկանում ո՞չ հողեղէն աշխարքում մնալ և ո՞չ նրա գործերին խառնուել: Կտրական ասում եմ, որ ես ո՞չ հարսնացու ընտրողն եմ և ո՞չ ան-

ցորական փառքի ետնից ընկնողը. սրտումս ես միայն մի փափազ ունեմ և այդ՝ անմեռ աշխարք գնալն է, ուրիշ ոչինչ:

*
* *

Թագաւորը վրայ անչափ տխրութիւն եկաւ, երբ լսեց որդու բաց, որոշ ձգտումը: Յոյս ունենալով, որ համոզելով կրկարենայ ետ կացնել այդ մտազրութիւնից, սկսաւ աղաչել.

— Սիրասուն և հատիկ որդի, անի, թող մտքինդ, գլուխ գալու բան չի. մի հեռանալ տանից. մեղք արի ինձ: Քու հասակին աչք կթած սպասելով արդէն ալևորել եմ. եօթը գաւակներիս վերջինն ես. քեզնով պտի մխիթարուեմ, ինձ անմխիթար մի թողիլ:

— Ո՛չ, հայր, խօսեց թագաւորազը կտրուկ լեզուով, ես ոչ պալատում մնացողն եմ և ո՛չ պսակուողը. պտի գնամ այն աշխարքը, ուր հրեշտակներն են բնակուում: Վճիռս վճիռ է: Ես գնալու եմ. հետս ոչինչ էլ չեմ վերցնում. զանձ, հարստութիւն, ժառանգական իրաւունք— իբրև երկրային բաներ— թողում եմ այստեղ: Ես յաւիտեան եմ ուզում ապրել:

— Ա՛յ որդի, նորից թախանձեց թագաւորը, դու հողեղէն ես, այնտեղ յաւիտեան մնալու շնորք չունես, անի, մի անիլ. նստիւր իմ ոսկե-

գօծ զահին և աշխարքը իմաստութիւնով կառավարիւր, բախտաւորեցրու ժողովրդին:

Որդին չլսեց ո՛չ հօրը և ո՛չ միւսներին. հաստատ մնաց իւր վճռին: Թագաւորը ապարդիւն համարելով ինդրել— աղաչելը, կանչեց պալատականներին ու նրանց ներկայութեանը ասաւ.

— Ծանր է ինձ պէս ալևոր հօր համար մի հատիկ դաւակից զրկուելը. ես ցանկանում եմ որ մնաս, որդի, և վերջին օրերին մխիթարես ինձ: Բայց որովհետև վճիռդ հաստատ է, չեմ ընդդիմանալ, որ չլինի թէ Արարչին բարկացնեմ. գնա անմահների աշխարքը և ապրիւր յաւիտեան: Այդ աւելի մեծ փառք է, քան թէ թագաւորական ոսկին ու արծաթը: Բայց եթէ անհամբեր գտնուելով լուծես վճիռդ, վերադառնաս մեր աշխարքը ամուսնանալու նպատակով, այն ժամանակ չես ազատուիլ ալևոր հօրդ անէծքից: Այսօր ինձ անմխիթար թողնելով, եթէ որևէ ժամանակ ցանկանաս երկրային վայելչութեան վրայ մտածել— ծանր նդովք եմ դնում— փափազիդ չհասնես, մուրադաչոր հող դառնաս:

— Ընդունում եմ, հայր, թող կատարուի նդովքդ, եթէ երկրաւոր վայելքի մօտենամ:

*
* *

Թագաւորն ու բարեկամները լալով օրհնեցին տղին և թողին իւր կամքին: Նա էլ իւր ունեցած հասարակ հագուստով դուրս եկաւ հօր ապարանքից ու գնում էր: Քաղաքի ծայրին մի պառաւ թորնից հաց էր հանում. օտարական կարծելով մի ճոթ թափա հաց տուաւ, որ ուտի: Թագաւորազը քաղց չզգալով այդ բախտաւոր ըսպէին, հացը ծոցը զրաւ ու պատահած ճամբէն բռնեց ու գնաց:

Չատ գնաց թէ քիչ, յայտնի չէ. հանդիպեց մի եղջերուն:

Եղջերուն ասաւ.

— Ա՛յ ջահէլ տղայ, ո՛ւր ես գնում այլպէս հեռու. մինս մօտս, առաւօտ իրիկու կ[թ]իր ինձ ու կառավարուիր:

Տղէն ասաւ.

— Ես, սիրուն եղջերու, գնում եմ անմեռ աշխարքը, որ այնտեղ անմահ մնամ: Քու նպատակն ինչ է, որ այսպէս ճիւղաւոր պողերով զլուխդ զարդարել ես. վերջդ ինչ է լինելու, մեռնելու ես:

— Ի հարկէ, պատասխանեց եղջերուն. մեռնելու եմ, բայց այնքան էլ շուտ չէ: Այս ձորը տեսնում ես, երբ պողերս այնքան մեծանան, որ ճիւղերով այս ձորը լցնեն, հարթ-հա-

ւասար ճամբայ շինեն, մարդիկ ու անասուններ գան վրովս անցկենան, այն ժամանակ կրմեռնեմ:

Դուխն օրօրելով ասաւ տղէն.

— Դարձեալ կարճ է այդ կեանքը. ես երկարն եմ ուզում:

* * *

Եղջերուն թողնելով առաջ գնաց ու հանդիպեց մի ճղուպրի ծառի. այնքան մեծ էր, այնքան ճիւղաւոր, որ եօթ հօտ ոչխար նստած մի կողմ հանգստանում էր, էլի մի մասը պարպ էր: Ճղուպրին ասաւ.

— Այ տղայ, ո՛ւր ես գնում զլուխդ կախ. կնց այս շուաքում, ոչխարը կ[թ]իր ու քեզ համար ազատ, երջանիկ կեանք քաշիր:

Տղէն պատասխանեց.

— Վայելչութիւն ուզենայի, հօրս գանձերին տիրութիւն կանէի. չնեղանաս, առաջարկը ընդունողը չեմ: Քայց արի, ճշմարիտն ասա, եթէ ինդիրդ կատարեմ, ինչպէս որ կաս, այլպէս մնալու ես, թէ վերջը քեզ էլ մահի նման մի բան է պատահելու:

— Ի՛նչ ես միամիտ խօսում, անխորձ տղայ, աշխարքի հետ հօ եղբայր չե՛նք դառնալու: Հարկից ստիպուած մի օր էլ ես աշխարքին մնաս բարով կասեմ ու չորանալով կրնկնեմ: Քայց

այդ շուտ չի լինիլ. ապա նայիր, տես քանի տերև ունիմ, այնքան տարի պտի ապրեմ ու ետով չորանամ:

—Օ՛հ. այդ ի՛նչ կեանք է անմահութեան հետ համեմատելով. այդքանով զո՛հ լինել չեմ կարող, անմեռ աշխարք եմ գնում:

* *

Ասաւ ու ծառը թողնելով առաջ գնաց: Ճամբի ափին մեծ քերձ կար և նրա գլխին մի արծիւ նստած: Թռչունը լեզու ստացաւ ու հարցրաւ.

—Ա՛յ տղայ, ո՛ւր ես գնում. կտրիճ ես երևում. մնա՛ միասին որս անենք, ապրենք: Այտեղ էրէները լիքն են:

Տղէն պատասխանեց.

—Չատ էլ քեզ ականջ զրի, մնացի, որս արինք, փափուկ մսերով կերակրուեցինք, դու ինձ ճշմարիտ խոստովանիր. էլի վերջը կրմեանենք: Արծիւը դարմանալով ստաւ.

—Մահի դէմ էլ խօսք կա՛յ: Ի հարկէ պտի մեռնենք. անմահ հօ չէ՛նք մնալ: Բայց այս պտի իմանաս, որ մեր ցեղի մահը շատ ուշ է վրայ հասնում: Պետուրներս տեսնում ես, քանի հատ են. այնքան տարի պտի ապրեմ ու ետով մեռնեմ:

—Ի՛հ, դժգոհ երեսով դարձաւ տղէն թըռ-

չունին, քու կեանքն էլ երկար չի եղել. ես այնտեղ եմ գնում, որ իսկի մահի անունն էլ չիմանամ:

* *

Ասաւ ու գնաց: Ոչ յոգնում էր, ոչ քաղցում. ինքն է չըզիտէր, հօր տնից սրբան է հեռացել. մէկ էլ տեսաւ ճամբի ափին մի ձեր մարդ, ձերմակ միրուքը գօտկից ետ: Ծերը հարցրաւ.

—Ա՛յ տղայ, ո՛ւր ես գնում այսպէս հեռու:

—Անմեռ աշխարքն եմ գնում, պապի, պատասխանեց թագաւորացն աշխուժով:

Ծերը քաղցր աչքով նայեց տղի ոտ ու գլխին և ասաւ.

—Չատ ես ջահէլ, ա՛յ որդի, անմեռ աշխարքում երկար չես համբերիլ: Արդէն մօտեցել ես քու ցանկացած աշխարքին. բայց նախ քան այնտեղ մտնելը՝ լաւ մտածիր: Գժուար ուխտ ես արել. ա՛փսոս ես. դու ծնող—ազգական կունենաս, քանի ուշ չէ, արի ետ դառ, գնա նրանց մօտ ու նրանց շրջանում ապրիր:

—Չէ՛, պապի, դառնալ չեմ կարող, դուր է համոզելդ, հօրս հետ երկար վիճաբանութիւն եմ ունեցել անմեռ աշխարք գնալու համար. խօսքս խօսք է:

—Ես քու լաւն ուզելով եմ ասում, որդի,

երը հաստատ վճռել ես, մեղք ու վարձը քու վզին — միասին գնանք, ճամբէն ցոյց տամ, որ չմոլորուես:

Ծերն ընկերացաւ, իրար հետ զրուց անելով գնացին հասան անմեռ աշխարքը ու երկիւղած ներս մտան:

Ջատ դուր եկաւ թագաւորազին: Գրախան ու արքայութիւնը ո՞ր հողեղէնին չեն դուր գալ: Առասկան անտառներ, անմահական աղբիւրները մէջներով քչքչալիս. գեղատեսիլ հասուն պտուղները ամեն կողմ փայլփլելիս — թռչունները ճխում ծլվում էին, թւաւոր հրեշտակներն էլ ջինջ օդում պտտում ու երգում: Թագաւորազին սիրով ընդունեցին իրանց մէջ: խառնուեց նրանց ու սկսաւ անվիշտ, անհոգս կեանք քաշել:

* *

Չառն ու քիչը Աստուած դիտէ, թագաւորազը այնքան ապրեց անմեռ աշխարքում, որ անմահական բաներից կշտացաւ: Կշտանալը նրանից երևաց, որ հողեղէն աշխարքը միտն ընկաւ: Ծնողներին կարօտել էր, փափագեց որ նրանց տեսութիւն գնայ:

Հրեշտակներից բաժանուելով մօտեցաւ ծերին, որ նոյնպէս անմեռ աշխարքումն էր և ասաւ.

— Ուզում եմ ծնողներիս տես գնալ, պապի, ինչ խորհուրդ կըտաս:

— Այդ քու կամքն է, որդի, եթէ ուզում ես, գնա. ես էլ կուղեկցեմ քեզ մինչև այնտեղ, ուր պատահեցի: Մի ժամանակ որ ասում էի թէ մշտական չես մնալ անմեռ աշխարքում, չէիր հաւատում: Տեսնում ես, զուշակութիւնս ինչպէս կատարուեց. սիրտդ ձգում է դէպի այն կողմը, ուր հայրենիքդ է, ուր դտնում են արեան մերձաւորներդ: Այստեղ միայն ժամանակաւոր բնակիչ դառաբ, որի համար անմեռ աշխարքից քեզ վարձ կըհասնի երեք խնձոր:

Ծերը երեք կարմրաթուշ խնձոր պոկելով մօտի ծառից մեկնեց թագաւորազին և ասաւ.

— Ստացիր վարձդ և լսի՛ր թէ ինչ պտի անես: Երբ հասնես ձեր աշխարքը, այնտեղ ծնողներդ կամ ուրիշները կառաջարկեն, որ մուսնանաս: Այս խնձորներից մինը կըտաս անօրդ, երկրորդը դոքանչիդ, իսկ երրորդը նշանածիդ: Լսեցի՛ր, չըմօռանաս:

— Այո՛, լսեցի ու չեմ մոռանալ, պատասխանեց թագաւորազը ժպտուն երեսով: Գրախտային վայրերին վերջին անգամն էլ աչք ածաւ, քաղցրութիւնը վայելեց, ապա ձերին հետևելով անմեռ աշխարքից դուրս եկաւ:

* *

1005
9076

Երկսով զլուխները կախ գալիս էին: Ամենից առաջ պատահեց ճամբի մօտի մեծ քերձը, որի զլխին նստած տեսել էր արձուին թագաւորազը: Այժմ էլ այնտեղ նստած էր, բայց շատ փոխուած. թուջունը բոյորովին փետրահան էր եղել. մարմնի վրայ մի հատ բմբուլ չկար: Աչքերի թերթերունքից միայն մէկն էր մնացել: Թագաւորազին նշմարեց թէ չէ, այդ մի թերթերունքն էլ վէր գցեց և քերձի զլխից զլորուելով մեռաւ:

Թագաւորազը նկատեց այդ. բայց բան չխօսեց. ծերի հետ առաջ գնաց. տեսաւ այն մեծ ճղոպրին չորացած, ճղակտոր վէր ընկած ձորաբերանում: Թագաւորազը իւր մէջ զարմանալով ասում էր. ինչքան կարճ է եղել արձուի և ճղոպրի կեանքը: Ծերը լուռ փոխում էր քայլերը առանց ուղեկցի երեսին նայելու: Ճամբէն շարունակելով նրանք հասան այն տեղը, ուր թագաւորազը եղջերուին էր պատահել. նախկին ձորի տեղը այժմ լցուած, հարթ-հաւասար ուղի էր դառած, մարդիկ քարուաններով անց ու դարձ էին անում:

Թագաւորազը շատ աշխատեց որ իւր գդացած զարմանքը աշկարա չանի, բայց չհամբերելով հարցրաւ ծերին.

— Պնայի, հոգով զարգարուես, ինձ հաս-

կացրու: Այս ինչքան ժամանակ է անցկացել, որ արձուր, ճղոպրին, եղջերուն դառամել, իրանց կեանքի վախճանին են հասել, իսկ ես ու դու մնացել ենք անփոփոխ:

Իրաւ որ, թագաւորազը դեռ այնպէս էր, ինչպէս իրանց տանից դուրս եկած օրը. բեղատեղը նոր ծլած երիտասարդ էր. նրան թուում էր թէ երէկ բաժանուեց հօրից:

Արդէն մօտեցել էին թագաւորի քաղաքին. ծերը նստաւ մի քարի ու ասաւ.

— Երկար ճամբալ զալուց թէ յոգնել եմ և՛ թէ քաղցել. երանի՛ մի կտոր հաց լինէր, ուտէի:

Թագաւորազը մի բան մտաբերելով ձեռք ծոց տարաւ ու գոչեց.

— Բնրի պապի, ուզածդ մի կտոր հաց է. միամիտ կաց, ես ունեմ մի ձոթ, այն էլ թաժա. հայրական քաղաքից հեռանում էի, մի պառաւ տուաւ:

Հացը մեկնեց ծերին: Երկուսն էլ թաժա հացը կերան ու իրար հրաժեշտ տալով բաժանուեցին: Ծերը զնաց ետ, թագաւորազը մտաւ քաղաք:

* *
* *
*

Քաղաքի մի ծայրից մինչև միւսը շրջեց, որոնեց թագաւորազը, չկարաց հօր պալատը գտնել: Յիշում էր որ հայրական բնակարանը դէպի արևմուտք էր նայում. այժմեան պալատի երեսը դէպի արևելք էր: Նայեց տեսաւ, որ քաղաքին իշխող թագաւորն էլ իւր հօր կերպն ու նմանութիւնը չունի:

Տխուր ու սրտմտած այս ամենի վրայ ներկայացաւ թագաւորազը քաղաքի իշխողին ու ասաւ.

— Դու ո՞վ ես, որ քեզ ու գլխու եկել նստել ես հօրս գահին. շուտով թող այս քաղաքը և դուրս իմ թագաւորութիւնից:

Իշխողը, որ միջահասակ մարդ էր, պատասխանեց.

— Ի՞նչպէս թէ դուրս, ո՞վ ես դու, որ իմ գահն ու գանձերն ինձնից խլում ես:

— Ես այս աշխարքի թագաւորի որդին եմ, ասաւ այլապուստ թագաւորազը. քեզ ձեռնուտու չէ, ի հարկէ ինձ չես ճանաչել:

— Այս աշխարքի թագաւորի որդին, դարմացած խօսեց իշխողը, ինչո՞վ կարող ես հաստատել: Չես գիտում, որ գրպարտողի, անասպացոյց խօսողի գլուխը կտրում են: Ասա, ինչո՞վ կարաս հաստատել ասածդ:

Թագաւորազը շուրջը նայեց, տեսաւ ոչինչ

չրկայ իւր հայրական ժառանգութիւնը ապացուցանող, ոչ պալատի կահ-կարասին, ոչ պալատականները— ոչինչ: Մնաց մոլորուած:

— Փնտրում եմ և քո կացած պալատի մէջ իմ հայրական ոչինչ չեմ գտնում. միայն քաղաքը իմ հայրական է, ես եմ նրա միակ ժառանգը: Հաւատում ես, թէ ոչ:

Այս ասաւ ու սրտնեղութիւնից աչքերը լցրաւ: Թագաւորը նրա թարմ պատկերին նայելով մեղքացաւ ու պատասխանեց.

— Քեզ խաբել, մոլորեցրել են իմ թշնամի մարդիկ, սրդի: Եթէ հայրդ թագաւոր եղել է, նա փող էլ կունենար սեզհական: Գնա՛ նրա փողերից թէկուզ մի հատը բեր, ցոյց տուր: Եթէ երեք օրից ետը դատարի ձեռով երևացել ես ինձ, կըհրամայեմ գլուխդ կտրեն:

— Յօժար եմ, թող ասածիդ պէս լինի. ասաւ թագաւորազը ու մտամոլոր դուրս եկաւ պալատից:

* * *

Ճամբին շատ էր մտածում. հնար չէր գտնում: Դիւակախ անցնում էր փողոցով. տեսաւ իւր հասակի տղէրք վէգի են խաղում ուրախ, դուարթ: Ոտներն էլ առաջ չգնացին, մնաց տղէն կանգնած, տխուր նրանց խաղին նայելիս:

Այդ տեղով մի կարճիկ պառաւ էր անցնում գլուխն ու վիզը շորերի մէջ փաթաթած. մտիկ արաւ խաղացող տղերանց. նրանց խորնդումի ու ծիծաղի վրայ ինքն էլ մտաբերեց իւր ջահէլ հասակը ու սրտում ցնծաց: Ետով նկատելով որ նրանցից ամենասիրունը մի կողմ շուարած կանգնած է, մօտեցաւ հարցրաւ.

— Ինչո՞ւ ես տխուր, ինչ է պատահել քեզ, սիրուն թողը: Թագաւորազր դարձաւ պառաւին.

— Ա՛յ, տատի, իմ ցաւը այս է— և սկսաւ պատմել իւր գլխին եկածը: Պառաւն էլ իւր միտ մնացած հին բաներից պատմեց հետևեալը.

— Սիրուն թողը, հարիւր տարի առաջ երբ հարս էի, կեսուրս պատմում էր, որ իւր կերարի երեխայ ժամանակ, թէ նրանից էլ վաղ, մի թագաւոր է եղել հարուստ, անհուն զանձի տէր, ու քու ասածի պէս մի հատիկ որդի է ունեցել: Նրա որդին ցանկացել է անմեռ աշխարքը տեսնել, զնացել է ու չի դարձել: Թագաւորն ու թագուհին որդու կարօտ քաշելով վշտից մեռել են. բայց մահից առաջ իրանց զանձերը պահել-թագցրել են այնպիսի քերձի մէջ, որ թռչունն իւր թևով հաղիւ կըհասնի այնտեղ:

Այդ քերձի ճրտեղ լինելը եթէ իմանան, երեք արծիւ կան, նրանք կիմանան, բնակւում

են Գը՛մը-գը՛մը ձորում: Նրանց սիրտը շահելու համար դու ողջ տաւար պտի առնես, տանես այն ձորում մորթես: Երբ նրանք կուտեն, կըկշտանան, քու լաւութեան փոխարէն քեզ ծառայութիւն կանեն և հօրդ զանձի տեղը կառնեն:

* * *

Թագաւորազր շնորհակալութեան համար պառաւի ձեռը մի քանի անդամ համբուրեց, ուրախացած սրտով շուկայ գնաց, իւր հագուստի գնոջ կտորները վաճառեց, մի կով առաւ ու տարաւ Գը՛մը-գը՛մը ձորը, մորթեց, մսերը փռեց առաւի սպիին ու ինքը գնաց քարի տակ թագնուեց:

Անցկացաւ ժամանակ, տեսաւ երեք արծիւ երևացին, բոլորովին փետրահան եղած: Թևերնին ծանր ու բարակ տարածելով եկան, իջան առուի մօտ: Զառամելուց աչքները կուլ էին գնացել. մասհոտ զգացին թէ չէ, վրայ ընկան ու ազահութիւնով կերան: Միջոց տալով շունչ առան, զարձեալ կերան պատրաստի ճաշից: Վերջը բոլորը կշտանալով տկուած մի կողմ քաշուեցին:

Լի ու գոհ նայեցին դէս դէն ուրախ աչ-

քերով. նրանցից մինը դարձաւ ընկերներին
ասաւ.

— Այսօրուայ պէս վաղուց է չեմ լիացած,
երանի իմանամ, ո՞վ էր այս ողորմած հոգին,
որ ինձ կուշտ կերակրեց, ձեռովս եկած լաւու-
թիւնը, ինչքան էլ դժուար լինի, չեմ խնայիլ:

— Ե՛ս էլ, ես էլ, լիակտուց կուրնչացին
ընկերները և գոհ աչքերով շարունակեցին
խշկոտալ դէս ու դէն: Յանկարծ տեսան մի
սիրուն տղայ վախվախելով առաջ է շարժոււմ
քարի մօտից:

Աւագ արծիւն ասաւ.

— Ա՛յ սիրուն, ողորմած տղայ, ինչպէս
երևում է այսօրուայ ճաշի նեղութիւնը դու ես
քաշել: Հարիւր տարի կըլինի, այսպէս լիառատ
կերակրուած չեսք: Համարձակ ասա, ի՞նչ բան ես
ուզում մեզանից, որ կատարենք ու դու շնոր-
հակալ մնաս:

— Ծեր թուչուններ, խօսեց տղէն, ձեզ մօտ
խնդիր ունեմ, եթէ կատարէք, մինչև ձեր մա-
հը այսօրուայ պէս ճաշ կուեննաք: Կարող էք
ասել ինձ գանձի տեղը այն թագաւորի, որի
որդին մի ժամանակ զնաց անմեռ աշխարքը:

— Գրանից էլ հեշտ բան. պատասխանե-
ցին միաբերան. լաւ ենք յիշում քու ասած թա-
գաւորին. կարծես երէկ էր, որ խեղճը որդու

կարօտը քաշելով մեռաւ, բայց մահից առաջ
նա գանձը սրահեց իւր որդու համար, յուսալով
որ վաղ ուշ ետ կըդառնայ անմեռ աշխարքից:
Գնաց ու չեկաւ:

— Ես եմ այն թագաւորի որդին, ասաւ
շփոթուած տղէն, ես էլ որ զնացի անմեռ աշ-
խարքը: Հայրս շատ իրաւ էր դուշակում, թէ
մշտական չեմ համբերիլ այնտեղ: Նրանց կարօ-
տելուց թողի հրեշտակների բնակարանը ու վե-
րադարձայ: Այժմ հօրս գահին ուրիշ մարդ է
նստել, ինձ չի ճանաչում. չեմ իմանում ի՞նչ ա-
նեմ: Ինձ առաջարկում է, որ ժառանգական
իւրաւունքներս ապացուցանելու համար հօրս փո-
ղից գտնեմ մի հատ ու ցոյց տամ. թէ չէ ինձ
իբրև խաբեբայի սլտի գլխատի:

— Իսկի էլ հոգ մի անիլ, մէկի տեղ հա-
րիւր փոզ կըտանք քու հօր գանձից, ասին ար-
ծիւները. նստիր ո՞րիս մէջքին ուզում ես, զը-
նանք քերծի մօտ:

Թագաւորազը մի քանի բոպէից ետը թըռ-
չունների հետ մտաւ մի անմատչելի քարան-
ձաւ, կոյտ ոսկիներից զրպանը լցրաւ ու թըռ-
չուններից այնտեղ բարձրանալու զաղտնի ուղին
իմանալով դարձաւ քաղաք:

* * *

Վստահ, ցնծադէմ ներկայացաւ իշխողին ու փողը ցոյց տուաւ: Նա վերցրաւ, նայեց, հաւատաց տղի ասածներին և ընդունեց իբրև թագաւորագ: Տղի զեղեցկութիւնն ու ճարտարութիւնը իշխողին շատ դուր էին եկել, ինքն էլ մի հատիկ սիրուն դուստր ունէր. ուրախ ու քաղցր դարձաւ տղին և այսպէս առաջարկ արաւ.

— Հաւատում եմ անտարակոյս, որ դու այս քաղաքի նախկին թագաւորի զաւակն ես. բայց չէ որ նա վաղուց մեռած է. չկայ: Գու հօր կարօտութիւն ունես, ես որդու. անրի իմ աղջկայ հետ սրահուիր, լինենք աներ ու փեսայ: Հօրդ ունեցածի հետ իմ գանձն ու կարողութիւնն էլ քեզ լինի: Քանի կենդան եմ, միասին վայելչութիւն քաշենք:

Այդ միջոցին դուռը բացուեց, թագուհին դստեր հետ ներս եկաւ: Թագաւորազը նրանց տեսնելիս կարմրեց. և յօժարակամ ընդունեց կարգուելու առաջարկը: Մտացաւ անմեռ աշխարքում տուած խոստումը, թէ գնում եմ միայն ծնողներիս տես ու վերադառնամ: Անհուն գանձն ու զեղեցիկ հարսնացուն նրան դայթակղեցրին:

* *
*


Հարսանիքի պատրաստութիւն տեսան, անթիւ բազմութիւն ժողովուեց, հանդէսը փառահեղ էր: Կերուխնդումի վերջը հրաւիրականները մէկ մէկ մօտեցան փեսային, շնորհաւորեցին:

— Երկնք ու բախտաւնր ապրիք միասին, ջանէլ նորապսակներ:

Թագաւորազը նորահարսի կողքին կանգնած միջոցին ինքն իրան մտածում էր. — այժմ աւելի երջանիկ եմ, կարծես, քան թէ անմեռ աշխարքում, դուր էի մեր հողեղէն աշխարքից զղւում:

Հերթն եկաւ անօրն ու գոքանչին. երբ մօտեցան հարս ու փեսային և համբուրելով բախտաւորութիւն ու երկար կեանք մաղթեցին, թագաւորազը սովորութեան համեմատ կամեցաւ պատուել նրանց մի մի ընծայով, ապա հեռանալ իրանց համար պատրաստած յատուկ օթեւանը: Նա ձեռը մեկնեց զրպանը, ուղեց ակն ու մարգարիտ հանել, մատներին զիպան կլոր բաներ. չիշեց անմեռ աշխարքում ստացած ընծաները ու պատուէրները: Խնձորներից մինը հանեց և պարզեց անօրը: Փեսան մատղաշ դէմքով էր. խնձորը անօրը տալուն պէս, մի ակնթարթում դէմքին միռուք բսաւ ու կրճքից ետ փռուեց: Հանդիսականները ապշեցին այդ անակնկալ դէպ-

քի վրայ: Քաղաւորազը առանց նկատելու իւր
վրայ եղած փոփոխութիւնը, ձեռք մեկնեց գրպա-
նը և երկրորդ խնձորը հանեց, ուրախագէմ
տուաւ զոքանչին: Այդ էլ տալուն պէս միրուքի
և գլխի մազերը բամբակի պէս ճերմակեցին:
Փեսան դարձեալ չէր նկատել իւր կերպարանքի
փոփոխութիւնը: Ուրախ տրամադրութիւնով ձե-
ռը երրորդ անգամ գրպանը տարաւ, ու այնտեղ
մնացած կարմրաթուշ և քնքուշ խնձորը
հանեց. երջանկութեան ժպիտը շրթունքին, ձեռը
մեկնեց, որ այդ էլ նշանածին տայ, վնչ նրա
քաղցը յոյսերին, իսկոյն փլրշկուելով տեղն ու
տեղը հող կըտրուեց ու ցրուելով տաքածուեց
հանդիսականների ոտների տակ...



Իմ աշխատութիւններից առանձին գրեղկներով
սպուել են.

1, Ծովինար <i>Բ. տպ.</i>	20 կ.
2, Հէքեաթներ.	30
3, Խարաղի տղայ (<i>Հրատ. ընկ.</i>)	40
4, Խուլ Խաչիկ.	25
5, Ձէն թագաւորի աղջիկը	25
6, Գալօ Ափօ	10
7, Աստուած չճանաչող	10
8, Աստուած աղքատի կերպում	20
9, Երկասիրութիւններ Ա. կասրուկ	50
10, Հողածին և անմեռ աշխարհ.	8

Դիմել Թիֆլիզում Գրիգորնանց Զարարէի
գրախանութը

Գինն է 150.

190.

2013

